

ԱՎԱՁԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻՎ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՉԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տիգրան ՆԵՐՍԻՍՅԱՆ

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,
ՀՀ ոստիկանության ակադեմիայի ՕՀԳ և
կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ,
ոստիկանության փոխգնդապետ*

Ավագակության ելությունն առավել ամբողջական ներկայացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզաբանել դրա օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները: Իսկ ցանկացած հանցագործության (այդ թվում՝ ավագակության) օբյեկտիվ հատկանիշները, ինչպես հայտնի է, բնութագրում են դրա օբյեկտը և օբյեկտիվ կողմը, իսկ սուբյեկտիվները՝ սուբյեկտն ու սուբյեկտիվ կողմը:

Ինչ վերաբերում է ավագակության օբյեկտին, ապա նախ և առաջ պետք է նշել, որ քննարկվող հանցավոր արարքը ոչ միայն հափշտակություններից, այլև սեփականության դեմ ուղղված բոլոր հանցագործություններից ամենածանրն ու ամենավտանգավորն է: Այդ կապակցությամբ Ա. Ի. Բոյցովն արդարացիորեն նշում է, որ ավագակությունը հանցավոր արարքի կատարման եղանակով հափաշտակությունների շարքում նախատեսված ամենավտանգավոր հանցագործությունն է: Բանն այն է, որ ավագակությունը ոչ միայն ուղղված է սեփականության դեմ, այլև վտանգում է անձի կյանքը և առողջությունը: Այլ կերպ ասած՝ ավագակության բուն էությունը ոչ այնքան սեփականության դեմ ոտնձգելու, որքան այդ ոտնձգության եղանակի՝ մարդու կյանքի կամ առողջության համար վտանգավորությունն է:

Մասնագիտական գրականության մեջ արդեն վաղուց տարածված է նաև այն տեսակետը, որ ավագակության հանրային վտանգավորությունը պայմանավորված է

ինչպես ոտնձգության անմիջական օբյեկտների բնույթով, այնպես էլ հանցավոր վարքագծի կրկնակի մոտիվացիայով: Մասնավորապես, քննարկվող հանցավոր արարքը դասվում է և՛ շահադիտական, և՛ բռնի մոտիվացիայով կատարվողների շարքը²: Ավագակությունը համարվում է շահադիտական-բռնի հանցավոր ոտնձգություն այնքանով, որքանով հանցավորը տվյալ դեպքում նպատակ է հետապնդում տիրանալու ուրիշի գույքին և որպես այդ նպատակին հասնելու միջոց է ընտրում կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը: Ընդ որում, հոգեբանական առումով հանցավորի մեջ գերակայում է ուրիշի գույքին տիրանալու ցանկությունը, ինչն էլ կանխորոշում է հանցավոր նպատակին հասնելու վերոհիշյալ միջոցի ընտրությունը³:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 175-ի վերլուծությունը նույնպես ցույց է տալիս, որ ավագակությունը երկօբյեկտ հանցագործություն է, որի հիմնական անմիջական օբյեկտը սեփականությունն է, իսկ պարտադիր լրացուցիչ օբյեկտները՝ մարդու կյանքը և առողջությունը:

Այս առումով պետք է նշել, որ ավագակության հիմնական անմիջական օբյեկտի հարցը առաջին հայացքից որոշակի տարակուսանքի տեղիք է տալիս: Բանն այն է, որ ներկայիս Հայաստանի քրեական օրենսդրությունը, ի տարբերություն խորհրդային տարիների, առաջնային է համարում մարդու կյանքն ու առողջությունը և հետո միայն այլ արժեքներ, այդ թվում՝ սեփականությունը: Ուստի կարծես դժվար է պատկերացնել, որ մի հանցագործություն, որի պարտադիր հատկանիշներից է մարդու կյանքը կամ առողջությունը վտանգի տակ դնելը, կարող է նախատեսված լինել ոչ թե

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

մարդու, այլ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքում:

Սակայն ավագակությունը, ինչպես և մյուս հափշտակությունները, նախ և առաջ ոտնձգում է սեփականության իրավունքի իրականացման հետ կապված հասարակական հարաբերությունների դեմ: Ավագակության հիմնական անմիջական օբյեկտի վերաբերյալ նման մոտեցումն արդարացվում է նաև նրանով, որ սպանությունը դուրս է մնում ավագակության դիսպոզիցիայից և ավագակության հետ կապված սպանությունը որակվում է համակցությամբ: Իսկ եթե ավագակության ժամանակ տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս է պատճառվում, այն համարվում է ավագակության ծանրացնող հանգամանքը, և ավելի խիստ պատիժ է նախատեսվում, քան դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելիս: Առողջությանը պատճառված վնասի մյուս տեսակները կլանվում են ավագակության հանցակազմում:

Բացի այդ, շատ կարևոր է հանցավորի դիտավորությունը. ավագակության ժամանակ այն առաջին հերթին ուղղված է գույքի հափշտակմանը, իսկ անձի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնությունը կամ այդպիսի բռնության սպառնալիքը միայն համապատասխան նպատակին հասնելու միջոց է⁴:

Ավագակության լրացուցիչ օբյեկտը, ինչպես արդեն նշվել է, մարդու կյանքի և առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Այսինքն՝ արարքն ավագակություն որակելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով կատարած հարձակումը վտանգել է մեկ ուրիշի կյանքը կամ առողջությունը: Ընդ որում, դա պայմանավորված է ոչ թե մեկ ուրիշին պատճառվող փաստացի վնասի ծանրությամբ, այլ վնաս պատճառելու՝

սպառնացող վտանգավորության աստիճանով:

Քննարկվող հանցագործության առարկան ուրիշի գույքն է, որը հափշտակելու նպատակով հանցավորը մեկ ուրիշի կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակում է գործում⁵: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ավագակային հարձակումներն առավել հաճախ կատարում են ամենօրյա օգտագործման առարկաներ, փող (այդ թվում՝ արտարժույթ), ոսկերչական իրեր, զարդեր, կենցաղային, գրասենյակային սարքավորումներ, տուժողների անձնական իրեր, սննդամթերք, սպիրտային խմիչքներ հափշտակելու նպատակով:

Այս առումով առանձին հետաքրքրություն և միաժամանակ բարդություն են ներկայացնում այն դեպքերը, երբ հարձակումը, որը զուգորդվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ նման բռնություն գործադրելու սպառնալիքով, կատարվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքին տիրանալու նպատակով (եթե, իհարկե, հանցավորը գիտակցել է այդ հանգամանքը): Հարց է առաջանում. կարելի է արդյոք որպես ավագակություն որակել գույքի ապօրինի տիրապետողի նկատմամբ հարձակումը:

Տվյալ հարցի կապակցությամբ հետաքրքրարժան մոտեցում է առաջարկում Վ. Մ. Վյունովը: Մասնավորապես, անդրադառնալով հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը մեկ ուրիշի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ կամ դրա գործադրման սպառնալիքով զուգորդված հարձակման եղանակով հափշտակելու դեպքերին, հեղինակը նշում է, որ դրանք պետք է որակել համակցությամբ՝ որպես գողություն և մարդու դեմ ուղղված հանցագործություն (համապատասխանաբար՝ առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնասի պատճառում կամ շահադիտական դրդումներով սպանություն): Նման մոտեցումը հեղինա-

կը հիմնավորում է այն դիրքորոշմամբ, որ այդ գույքի սեփականատիրոջ (այլ օրինական տիրապետողի) համար տվյալ հափշտակությունը գաղտնի է, նա չի գիտակցել, չի գնահատել հանցավորի գործողությունները որպես հանցագործություն⁶:

Սակայն տվյալ մոտեցմանը դժվար է համաձայնել: Բանն այն է, որ արարքը որպես ավազակություն որակելու համար կարևորվում է հանցավորի դիտավորության ուղղվածությունը, նրա գիտակցումը, որ կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակում գործելով՝ ինքը տիրանում է ուրիշի գույքին, որը հանցագործության հետևանքով տվյալ պահին հայտնվել է դրա փաստացի տիրապետողի մոտ: Ամենևին էլ պարտադիր չէ, որ նա գիտակցի, թե կոնկրետ ումն է այդ գույքը, և ինչպես է նա գնահատում տվյալ հարձակումը կամ գնահատում է, թե՞ ոչ:

Ուստի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքին տիրանալու նպատակով հարձակումը, որը զուգորդվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ նման բռնություն գործադրելու սպառնալիքով (եթե հանցավորը գիտակցել է այդ հանգամանքը), պետք է նույնպես որակել որպես ավազակություն, այլ ոչ թե գողություն: Տվյալ դեպքում ամենևին էլ նշանակություն չունի գույքի օրինական տիրապետողի կողմից հափշտակության հանգամանքի գիտակցումը:

Այլ է իրավիճակը այն դեպքերում, երբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով հանցավորը տիրանում է ուրիշի այնպիսի գույքի, որը դրա փաստացի տիրապետողը (հանցավորի համար ակնհայտ) ստացել է հանցագործության համար որպես պարգևատրություն (վարձատրություն) կամ կաշառք: Նման իրավիճակում, ըստ մեզ, արարքը պետք է որակել միայն որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն: Այլապես կստացվի, որ քրեական օրենքը կոչված է

պաշտպանելու հասարակական հարաբերությունների սուբյեկտների ինչպես օրինական, այնպես էլ անօրինական շահերը:

Ավազակության օբյեկտիվ կողմի կապակցությամբ նախ և առաջ պետք է նշել, որ այն բնութագրվում է հանցագործության յուրահատուկ եղանակով, որը չի համապատասխանում հափշտակության ընդհանուր հասկացությանը: Ցանկացած հափշտակություն, ինչպես հայտնի է, բնութագրվում է ուրիշի գույքը ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնելով կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելով, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել⁷: Իսկ ավազակությունը բնութագրվում է ոչ թե ուրիշի գույքին տիրանալով, այլ այդ գույքի հափշտակության նպատակով հարձակմամբ⁸: Հավանաբար հենց այդ պատճառով է Ս. Մ. Կոչոին կարծիք հայտնում, որ ավազակությունը հափշտակության առանձնահատուկ տեսակ է, որը նախատեսված է ձևական հանցակազմով, և որի հանցափորձը բացառվում է, քանզի ուրիշի գույքին փաստացի տիրանալը և նրան գույքային վնաս պատճառելը տվյալ հանցակազմի շրջանակներից դուրս եմ⁹:

Սակայն տվյալ մոտեցումը, մեր կարծիքով, արդարացված համարվել չի կարող: Բանն այն է, որ, նախ, օրենսդրական ներկայիս ձևակերպմամբ ավազակությունը հափշտակություն համարվել չի կարող: Հափշտակությունը ենթադրում է մեկ ուրիշի գույքային իրավունքի պարտադիր խախտում նրա գույքին ապօրինի տիրանալու ձևով: Այլ կերպ ասած՝ ավազակությունը հափշտակության ինքնուրույն ձև համարելու պարագայում որոշիչ պետք է համարել հետևյալ երկու գործոնը՝ ուրիշի գույքի հափշտակությունը և կյանքի կամ առողջության համար վտանգավոր ֆիզիկական կամ հոգեկան բռնություն գործադրելը¹⁰:

Բացի դրանից՝ դա ճիշտ է բացառիկ դեպքերում, բայց ըստ մեզ հնարավոր է

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նաև ավագակության փորձի փուլը: Այսպես, փաստական սխալի կանոններով ավագակության փորձ պետք է որակել այն դեպքը, երբ ավագակը սխալմամբ զինված հարձակում է գործում ոչ թե մարդու, այլ մանեկենի վրա: Նույն կերպ պետք է որակել նաև այն դեպքը, երբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն կամ նման բռնության սպառնալիք գործադրելով հափշտակություն կատարելու նպատակով բնակարան կամ պահեստ մուտք գործելով՝ հանցավորը հայտնաբերում է, որ այնտեղ ոչ ոք չկա:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ քրեական օրենսգրքում ավագակության հանցակազմի սահմանումը պետք է ստանա այնպիսի ձևակերպում, որն ամբողջովին կարտացոլի տվյալ հանցագործության էությունը: Մասնավորապես, Ա.Պ. Կորչագինը նշում է, որ տվյալ դեպքում նպատակահարմար է օգտագործել «բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելով՝ ուրիշի գույքին տիրանալ» բանաձևը՝ դրանով իսկ հատուկ ընդգծելով ավագակության նաև գույքային բնույթը¹¹:

Քրեագետներից ոմանք էլ առաջարկում են ավելի «պարզեցնել» ավագակության հանցակազմը: Այսպես, Ա.Ի. Մարցևը և Վ. Վ. Վեկլենկոն եզրակացնում են, որ տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմը չի սահմանափակվում միայն հարձակմամբ, բայց միշտ կապված է ուրիշի գույքին տիրանալիս տուժողի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն գործադրելու հետ: Ուստի, նշված հեղինակների կարծիքով, ավագակության ավարտման պահը պետք է կապել ֆիզիկական կամ հոգեկան բռնության գործադրման հետ: Արդյունքում նրանք առաջարկում են ավագակությունը սահմանել որպես «ուրիշի գույքին տիրանալը բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»¹²:

Քննադատելով տվյալ մոտեցումը՝ Օ.Վ. Բելոկուրովն արդարացիորեն նշում է, որ ավագակության օբյեկտիվ կողմի հիմնական առանձնահատկություններից մեկը հանցագործության եղանակի՝ տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավորությունն է: Այդ կապակցությամբ հեղինակն առաջարկում է քննարկվող հանցագործության հետևյալ հասկացությունը. «Ավագակությունը ուրիշի գույքին տիրանալու նպատակով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրել է կամ դրա գործադրման սպառնալիքը»¹³: Նմանատիպ առաջարկություններով են հանդես գալիս նաև Ա. Ուսպենսկին և Ա. Կոզլովը¹⁴:

Քննարկվող հարցերի կապակցությամբ առավել առաջադիմական, ավանդականից տարբերվող լուծումներ են առաջարկում Պ. Կորոբովը և Ա. Իվանցովան: Մասնավորապես, նրանք երկուսն էլ առաջարկում են ավագակությունը սահմանել որպես նյութական հանցակազմով հանցագործություն հափշտակություն: Այսպես, Պ. Կորոբովի կարծիքով, առավել նպատակահարմար է կիրառել տվյալ հանցագործության հետևյալ հասկացությունը. «Ավագակությունն ուրիշի գույքի հափշտակություն է, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված հարձակման եղանակով»¹⁵:

Իսկ Ա. Իվանցովան, մեր կարծիքով արդարացիորեն, առաջարկում է հրաժարվել «հարձակում» եզրույթի օգտագործումից և սահմանել ավագակությունը որպես «հափշտակություն, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»¹⁶:

Այսպիսով, ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդված 175-ի դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ ավագակության օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

1) ուրիշի գույքը հափշտակելու նպա-

տակով հարձակում,

2) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության գործադրում կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիք:

Այս առումով անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել «հարձակում» և «կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն և այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիք» հասկացությունները:

«Հարձակում» եզրույթը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության մեջ օգտագործվում է հազվադեպ և ենթադրում է տուժողի համար հանկարծակի, ագրեսիվ վարքագիծ, որը զուգորդվում է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Ու թեև, ինչպես արդարացիորեն նշում է Պ. Ազապովը, բազմաթիվ վեճերի առիթ հանդիսացող տվյալ հասկացության օրենսդրական սահմանումը բացակայում է, մասնագիտական գրականության մեջ բազմաթիվ փորձեր են արվում առանձնացնելու դրա հատկանիշները¹⁷:

Այսպես, Տ.Ի. Նագանան առաջարկում է հարձակման հասկացության հետևյալ սահմանումը. «Հարձակումը օրենքում նշված օբյեկտների վրա կամ տուժողի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով վերջինիս վրա ոչ պրովոկացված, ապօրինի, ագրեսիվ-բռնի, հանկարծակի, բացահայտ կամ քողարկված ներգործություն է, որն ուղղված է հանցավոր նպատակին հասնելուն»¹⁸:

Վ.Ա. Վլադիմիրովը նշում է, որ հարձակումը գործընթաց է, որի սկիզբը բռնություն գործադրելու իրական վտանգ ստեղծելու, իսկ ավարտը հանցավոր նպատակին հասնելու (ավազակության պարագայում՝ ուրիշի գույքին տիրանալու) պահն է: Հեղինակը հարձակումը դիտում է ոչ թե որպես ագրեսիվ-բռնի վարքագծի մեկանգամյա ակտ, այլ ներգործության գործընթաց, որը բռնության գործադրման իրական սպառնալիք է պարունակում իր տևողու-

յան ամբողջ ընթացքում¹⁹:

Ն. Ս. Գագարինը, անդրադարձնալով սեփականության դեմ ուղղված որոշ հանցագործությունների որակման առանձնահատկություններին, առաջարկում է ավազակության իմաստով հարձակումը հասկանալ որպես ակտիվ, անսպասելի, դիտավորյալ, ապօրինի այնպիսի գործողությունների կատարում, որոնք ստեղծում են տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնության անհապաղ և անմիջական գործադրման իրական սպառնալիք և նպատակ են հետապնդում տիրանալու ուրիշի (պետական կամ անձնական) գույքին²⁰:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մասնագիտական գրականության մեջ տարակարծություն կա «հարձակում» և «բռնություն» հասկացությունների հարաբերակցության առումով: Մասնավորապես, ընդհանրացնելով նշված հասկացությունների բազմատեսակ սահմանումները՝ նախ և առաջ կարելի է առանձնացնել հետևյալ երկու հիմնական մոտեցումները՝

1) «հարձակում» և «բռնություն» հասկացությունները զրեթե նույնանուն են,

2) թե՛ հարձակումը և թե՛ բռնությունը ավազակության հանցակազմի ինքնուրույն տարրեր են:

Ընդ որում, քրեագետների կարծիքները տարբերվում են անգամ վերը նշված մոտեցումներից յուրաքանչյուրի շրջանակներում: Այսպես, Գ. Լ. Կրիզերը կարծում է, որ «հարձակում» և «բռնություն» հասկացությունները նույնանուն են, իսկ դրանց միաժամանակյա մատնանշումը քրեական օրենքում պարզապես անհաջող խմբագրման արդյունք է: Մինչույն ժամանակ նա նշում է, որ եթե հարձակում ասելով հասկանանք բռնություն գործադրելու իրական վտանգ ստեղծելը, ապա այն, փաստորեն, իրենից կներկայացնի հոգեկան բռնության դրսևորում²¹:

Յու. Մ. Կարակետովը նշում է, որ «հարձակում» և «բռնություն» հասկացությունները՝ որպես ավազակության հանցակազ-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

մի հատկանիշներ, չի կարելի արհեստականորեն ո՛չ տարանջատել, ո՛չ էլ նույնացնել: Նրա կարծիքով, նշված գործողությունները գործնականում իրականացվում են միաժամանակ, իսկ սահմանագատել դրանք կարելի է միայն մտովի²²:

Նշելով, որ բռնությունը անձի դեմ է ուղղված, իսկ ուրիշի գույքին տիրանալու նպատակը բնութագրում է սեփականության դեմ ուղղված ոտնձգությունը, Լ.Դ. Գաուխմանը միտք է արտահայտում, որ «ավագակության դեպքում հարձակումը կարելի է բնութագրել որպես գործողություն, որը տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է և բնութագրում է կապը սեփականության և անձի դեմ ուղղված ոտնձգությունների միջև, ինչն էլ պայմանավորում է այդ ոտնձգությունների միասնությունը»²³:

Քննարկվող հասկացությունները տարանջատող հեղինակները, որպես կանոն, հիմք են ընդունում Վ.Ա. Վլադիմիրովի և Յու.Ի. Լյապունովի կողմից ժամանակին տրված սահմանումը. «Հարձակումը ակտիվ և տուժողի համար անսպասելի գործողություն է, որը հարձակման ենթարկված անձի նկատմամբ անմիջական և անհապաղ բռնություն գործադրելու իրական վտանգ է ստեղծում»²⁴:

Այս առումով Ա.Ա. Գրավինան և Պ.Ս. Յանին կարծիք են արտահայտում, որ հարձակումը կարելի է պատկերացնել որպես մեկ բարդ, ընդհանուր գործողություն, որը բաղկացած է իրար հաջորդող հետևյալ երկու փուլերից՝ 1) բռնություն գործադրելու իրական վտանգ ստեղծելուց և 2) այդ բռնությունն անմիջականորեն գործադրելուց²⁵:

Միևնույն ժամանակ, Վ.Ի. Սիմոնովի և Վ.Գ. Շունիխինի կարծիքով, «հարձակում» և «բռնություն» հասկացությունները ինքնուրույն են և որևէ պարագայում չեն կարող ամբողջովին համընկնել, նույնանալ,

թեև բռնությունը մասամբ մտնում է հարձակման մեջ²⁶:

Մենք այս կապակցությամբ համակարծիք ենք այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, որ քննարկվող հասկացությունների հարաբերակցության վերլուծության ընթացքում չի կարելի դրանք միանշանակորեն հակադրել կամ հակառակը՝ նույնացնել, քանի որ որոշակի գործողություններ իրականացնելիս հարձակումը, այսպես թե այնպես, կապված է ֆիզիկական կամ հոգեկան բռնության հետ: Այլ կերպ ասած՝ թեև «հարձակում» և «բռնություն» հասկացությունները չեն նույնանում, բայց անխզելիորեն փոխկապակցված են: Ուստի պատահական չէ, որ ավագակության իմաստով օրենսդիրն օգտագործում է «բռնությամբ զուգորդված հարձակում» հասկացությունը: Այլ կերպ ասած՝ հարձակման մասին խոսք չի կարող լինել, եթե բացակայում է բռնությունը²⁷:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ «հարձակում» եզրույթը ՀՀ, ինչպես և նախկին ԽՍՀՄ գրեթե բոլոր հանրապետությունների քրեական օրենքներում օգտագործվում է զուտ ավանդույթից ելնելով: Բանն այն է, որ առանձին դեպքերում գույքը կարող է հափշտակվել նաև կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ, սակայն առանց հարձակման: Օրինակ՝ երբ հանցավորը տուժողին թույն է տալիս: Ուստի, արարքի որակման տեսանկյունից հարձակումը ինքնին չպետք է որևէ նշանակություն ունենա: Ավագակության օբյեկտիվ կողմի հիմնական հատկանիշ պետք է համարվի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը, որը, ինչպես արդեն նշվեց, կարող է նաև կապված չլինել հարձակման հետ: Սակայն ՀՀ քր. օր.-ի հոդված 175-ի ներկայիս ձևակերպման տառացի մեկնաբանությունից հետևում է, որ հարձակում չհանդիսացող ոտնձգությունները չեն կարող որակվել որպես ավագակություն, ինչի հետ դժվար է համաձայնել:

Այս առումով համակարծիք ենք այն հեղինակների հետ, ովքեր նման մոտեցումը սխալ են համարում և առաջարկում են քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը ձևակերպել այնպես, որ ավագապետության հատկանիշ համարվի մարդու կյանքի կամ առողջության համար վտանգավոր ցանկացած ոտնձգությունը, այլ ոչ թե միայն հարձակումը²⁸:

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ առաջարկում ենք ՀՀ քր. օր.-ի բոլոր այն հոդվածներում, որտեղ հարձակումը նախատեսված է որպես հանցագործության եղանակ, հրաժարվել «հարձակում» եզրույթից և փոխարինել այն «բռնություն», «բռնություն գործադրելու սպառնալիք» կամ, ըստ անհրաժեշտության, «ուրիշի գույքի ոչնչացում կամ վնասում» և «ուրիշի գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք» հասկացություններով: Իսկ այն դեպքերում, երբ այդ փոխարինումը հնարավոր չէ (օրինակ՝ քր. օր.-ի հոդված 365-ում), ըստ մեզ, անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ բացահայտել «հարձակում» հասկացության բովանդակությունը:

Ինչ վերաբերում է բռնության գործադրմանը, ապա համարելով ավագապետության պարտադիր հատկանիշ՝ քրեական օրենքն այն ձևակերպել է երկու ձևով՝ ա) կյանքի համար վտանգավոր և բ) առողջության համար վտանգավոր:

Ընդ որում, բռնությունը պետք է համարել կյանքի համար վտանգավոր, երբ՝

1. Հանցավորը տուժողին կյանքից դիտավորությամբ զրկում է՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով: Ինչպես արդեն նշվել է, ավագապետության հանցակազմը սպանությունը չի ներառում, և նման դեպքերում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ ավագապետություն (քր. օր.-ի հոդված 175-ի համապատասխան մասով) և ավագապետության հետ զուգորդված սպանություն (հոդված 104-ի երկրորդ մասի 8-րդ կետ): Ինչ վերաբերում է այնպիսի բռնությանը, որի հետևանքով մեկ ուրիշը կյանքից զրկվել է

անզգուշությամբ, ապա արարքը պետք է որակել միայն որպես ավագապետություն (եթե բռնությունը դրսևորվում է դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելով, որը անզգուշությամբ առաջացնում է տուժողի մահ, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ քր. օր.-ի հոդված 175-ի երրորդ մասի երրորդ կետով և հոդված 112-ի երկրորդ մասի տասնչորսերորդ կետով):

2. Հանցավորը տուժողի նկատմամբ կատարում է այնպիսի գործողություններ, որոնք վտանգի տակ են դնում տուժողի կյանքը, և շարունակվում են այնքան ժամանակ, քանի դեռ չի կատարվում հանցավորի պահանջը՝ հանձնել գույքը կամ ասել գույքի տեղը: Ընդ որում, նշանակություն չունի՝ տուժողին փաստացի վնաս պատճառվել է, թե՞ ոչ: Օրինակ՝ մարդուն խեղդելը, գլուխը երկար ժամանակով կամ հաճախակի ջրի մեջ մտցնելը, շնչառությունը տարբեր ձևերով փակելը, էլեկտրական հոսանքով մարմնին դիպչելը, աստիճանաբար թույն ներարկելը և այլն:

Եթե հանցավորը կամովին դադարեցնում է կյանքի համար վտանգավոր գործողությունները, սակայն շարունակում է պահանջել գույքը, ապա արարքը որակվում է միայն որպես ավագապետություն (եթե այդ գործողությունների ընթացքում տուժողի առողջությանը հասցվել է ծանր վնաս՝ ավագապետություն՝ ծանրացնող հանգամանքում):

Եթե նշված գործողությունները դադարեցվում են հանցավորի կամքից անկախ հանգամանքներով (տուժողի դիմադրություն, կողմնակի անձանց միջամտություն և այլն), սուբյեկտիվ կողմի առկայության դեպքում (գործողությունները, հակառակ դեպքում, կշարունակվեին մինչև տուժողին կյանքից զրկելը), արարքը պետք է որակել որպես ավագապետություն և ավագապետության հետ զուգորդված սպանության փորձ:

Առողջության համար վտանգավոր բռնություն է հանդիսանում առողջությանը ծանր, միջին ծանրության կամ թեթև վնաս

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պատճառելը: Առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելը ընդգրկվում է հասարակ ավագակության հանցակազմի մեջ և ինքնուրույն չի որակվում: Նման դեպքերում արարքը որակվում է քր. օր.-ի հոդված 175-ի առաջին մասով: Առողջությանը ծանր վնաս պատճառելը քր. օր.-ի հոդված 175-ի երրորդ մասով նախատեսված է որպես հանցակազմի առավել ծանրացնող հանգամանք: Առողջությանը ծանր վնաս պատճառելը, փաստորեն, նույնպես ընդգրկված է ավագակության հանցակազմի մեջ (ծանրացնող հանգամանքներով հանցակազմ) և ինքնուրույն չի որակվում:

Հարկ է նշել, որ արարքը ավագակություն որակելու համար պարտադիր չէ տուժողին փաստացի վնաս պատճառելը. բավական է միայն, որ բռնությունը գործադրելու պահին այն վտանգավոր լինի կյանքի կամ առողջության համար: Օրինակ գույքը հափշտակելու նպատակով տուժողի գլխին ծանր առարկայով հարվածելը, ընթացքի ժամանակ գնացքից կամ ավտոմեքենայից ցած գցելը, դանակով հարվածելը և այլն՝ անկախ նրանից՝ այդ գործողությունները իրական վնաս պատճառել են, թե՞ ոչ, համարվում են կյանքի կամ առողջության համար վտանգավոր: Ինչ վերաբերում է արարքը քր. օր.-ի հոդված 175-ի երրորդ մասի երրորդ կետով որակելուն, ապա դրա համար անհրաժեշտ է, որ տուժողի առողջությանը փաստացի ծանր վնաս պատճառվի:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ արարքի որակումը որոշակի դժվարություններ է առաջացնում այն դեպքում, երբ տուժողին փաստացի վնաս չի պատճառվում: Մասնավորապես, նման դեպքերում անհրաժեշտություն է առաջանում հստակ որոշել բռնության բնույթը: Բանն այն է, որ եթե բռնությունը կյանքի կամ առողջության համար վտանգավոր չէ, ապա առկա է կողո-

պուտի հանցակազմը: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի բոլոր հանգամանքները և առաջին հերթին՝ բռնության գործադրման եղանակն ու գործիքը: Միայն բռնության բնույթը պարզելուց հետո կարելի է արարքը որակել կամ որպես ավագակություն (եթե հաստատվում է, որ այն կյանքի կամ առողջության համար իրական վտանգ է ներկայացրել), կամ որպես կողոպուտ (եթե պարզվել է, որ բռնությունը կյանքի կամ առողջության համար վտանգ չի ներկայացրել):

Կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը, որը ավագակության հանցակազմի օբյեկտիվ կողմի մյուս հատկանիշն է, կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Ավելի հաճախ հանդիպում է խոսքով, զենք կամ որպես զենք հանդիսացող առարկայի ցուցադրմամբ իրականացվող սպառնալիքը: Հնարավոր է սպառնալիքը նաև ժեստով, օրինակ՝ մատը կոկորդին քսելով (սպանելու սպառնալիք): Խոսքով սպառնալիքը սովորաբար դրսևորվում է հետևյալ արտահայտություններով. «կմորթեմ», «վիզդ կկտրեմ», «աչքդ կհանեն» և այլն:

Սակայն, անկախ արտահայտման ձևից, սպառնալիքը պետք է բավարար հիմքեր տա տուժողին համոզված լինելու, որ հանցավորի պահանջներն անմիջապես չկատարելու դեպքում նրա նկատմամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն կկիրառվի: Այսինքն՝ ավագակության հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ սպառնալիքը իրական լինի: Միևնույն ժամանակ, հանցավորն էլ պետք է գիտակցի, որ նման սպառնալիքով կտորում է անձի դիմադրությունը, նրան ստիպում է հանձնել գույքը: Ընդ որում, ինչպես և ֆիզիկական բռնություն գործադրելու դեպքում այն կարող է կիրառվել թե՛ տուժողի և թե՛ նրա մերձավորների՝ ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների և այլ անձանց նկատմամբ²⁹:

Վերը նշված հանգամանքները հաշվի առնելով՝ անհրաժեշտ ենք համարում ՀՀ քր. օր.-ում «կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն» հասկացության բովանդակության բացահայտումը: Մասնավորապես, առաջարկում ենք օրենսգրքի հոդված 175-ի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝ «կյանքի կամ առողջության համար վտանգավոր է համարվում այն բռնությունը, որն առաջացրել է տուժողի մահ կամ ծանր կամ միջին ծանրության կամ թեթև վնաս է պատճառել նրա առողջությանը, ինչպես նաև այն բռնությունը, որը չի առաջացրել այդ հետևանքները, բայց գործադրման պահին դրանց առաջացման իրական վտանգ է ստեղծել»:

Ամփոփելով ավագակության հասկացության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները՝ հարկ ենք համարում նշել նաև, որ տվյալ հանցագործության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է ավագակության սահմանում ոչ թե որպես հարձակում, այլ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ նման բռնություն գործադրելու սպառնալիքով հափշտակություն (նյութական հանցակազմով նախատեսված հանցագործություն): Հետևաբար առաջարկում ենք ՀՀ քր. օր.-ի հոդված 175-ի 1-ին մասի հետևյալ ձևակերպումը՝ «Ավագակությունը՝ ուրիշի գույքի հափշտակությունը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով...»:

Ինչ վերաբերում է ավագակության սուբյեկտիվ հատկանիշներին, ապա վերջիններս, ինչպես արդեն նշվել է, բնութագրում են դրա սուբյեկտն ու սուբյեկտիվ կողմը:

Ավագակության սուբյեկտը հանցագործության պահին 14 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձն է: Իսկ սուբյեկտիվ կողմից այն բնութագրվում է միայն

ուղղակի դիտավորությամբ և հանցագործության հատուկ նպատակով՝ ուրիշի գույքի հափշտակությամբ: Իսկ քանի որ հանցագործության նպատակը տվյալ դեպքում ուրիշի գույքը հափշտակելն է, ուստի մարդու դեմ ուղղված ոտնձգությունը, ինչպես արդեն նշվել է, հանդիսանում է այդ նպատակին հասնելու միջոց:

Այս առումով հանցագործության մեղքի ձևի բովանդակությունը կարող է բացահայտվել երկու իմաստով՝ 1) ուրիշի գույքին տիրանալու և 2) այդ նպատակով կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու կամ դրա գործադրման սպառնալիքի կապակցությամբ:

Մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ դիտավորության առաջացումն ու ձևավորումը հոգեբանական բարդ գործընթացի բաղկացուցիչ մասեր են, որոնք ներառում են հետևյալ փուլերը՝ 1) հանցավորի մեջ ավագակություն կատարելու որոշակի պահանջմունքի առաջացումը, 2) նրա կողմից այդ պահանջմունքի գիտակցումը և դրա հիման վրա որոշակի նպատակի հասնելու ցանկության, շարժառիթների ձևավորումը, 3) այդ ցանկությունների, շարժառիթների պայքարը, 4) վերջնական որոշման կայացումը, 5) այդ որոշման իրականացումը:

Այլ կերպ ասած՝ ավագակություն կատարելու շարժառիթը տվյալ դեպքում նախորդում է դիտավորության առաջացմանը, այսինքն՝ որոշակի նպատակի հասնելու համար հանցանք կատարելու որոշման կայացմանը: Հետագայում այդ շարժառիթը պայմանավորում է գործելու որոշակի նպատակադրությունը և նպատակին հասնելու միջոցների ու եղանակների ընտրությունը:

Ընդ որում, հանցագործության շարժառիթի դերն անչափ մեծ է ոչ միայն դիտավորության ձևավորման, այլև նպատակադրության գործում: Յուրաքանչյուր շարժառիթի համապատասխանում է որոշակի նպատակ: Առանց շարժառիթ չի կարող կա-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տարվել ոչ մի դիտավորյալ հանցանք: Հանդիսանալով հանցավոր նպատակի առաջացման հիմք՝ հենց շարժառիթն է ձևավորում դիտավորությունը և հանցավոր արարք կատարելու նպատակը: Եթե շարժառիթը ցույց է տալիս, թե ինչն է տվյալ անձի վարքագծի այս կամ այն դրսևորման հիմք հանդիսացել, ապա նպատակի բացահայտումը հնարավորություն է տալիս պատասխանելու այն հարցերին, թե ինչու է նա հանցանք կատարել և դրանով ի՞նչ արդյունքի է ցանկացել հասնել³⁰:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 175-ի 1-ին մասի դիսպոզիցիայում հանցագործության շահադիտական (հափշտակություն կատարելու) նպատակի նախատեսումը լիովին հերքում է սխալական տեսակետն այն մասին, որ տվյալ նպատակը ավագակության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ չէ, և որ իրականում հնարավոր է նաև «առանց շահադիտական նպատակի ավագակություն»:

Ավագակության պարագայում շահադիտական նպատակի էությունն այն է, որ հանցավորը ձգտում է իրենը կամ մեկ այլ անձինը դարձնել ուրիշի գույքը: Այդ նպատակն իրականանում է՝ հանցավորի կողմից ուրիշի գույքը որպես իր սեփականը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու փաստացի հնարավորություն ստանալով: Նույն կերպ պետք է գնահատվեն նաև այն դեպքերը, երբ հանցավորն ուրիշի գույքը դարձնում է ոչ թե իրենը, այլ մեկ ուրիշինը: Հետևաբար, տվյալ իմաստով շահադիտական նպատակի բացակայությունը բացառում է ուրիշի գույքին տիրանալը որպես ավագակություն որակելու հնարավորությունը:

Սակայն ՀՀ քր. օր.-ի հոդված 175-ի դիսպոզիցիայում «հափշտակելու նպատակով» եզրույթի օգտագործումը, մեր կարծիքով, հաջողված չէ: Մասնավորա-

պես, օրենսդրական տվյալ ձևակերպումից հետևում է, որ ավագակությունը հափշտակություն չհանդիսացող ինքնուրույն հանցագործություն է: Ուստի պատահական չէ, որ քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրելիս մասնագիտական գրականության մեջ առաջարկում են օգտագործել «շահադիտական նպատակ» հասկացությունը³¹:

Հարկ ենք համարում նշել նաև, որ նյութական շահը հանդիսանում է ավագակության հիմնական դրդապատճառը: Գրեթե բոլոր հեղինակները նշում են, որ ավագակությունները որպես կանոն կատարվում են շահադիտական շարժառիթով: Մասնագիտական ժամանակակից գրականության մեջ նաև նշվում է, որ տվյալ շարժառիթը, ի տարբերություն նպատակի, քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշ չէ³²:

Այսպիսով, ավագակության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է միայն հարձակման նպատակը՝ ուրիշի գույքը հափշտակելու ձգտումը: Ուստի տվյալ հանցագործության որակման համար որևէ նշանակություն չունի արարքի կատարման շարժառիթը: Կարևորն այն է, որ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ կամ դրա գործադրման սպառնալիքով զուգորդված հարձակումը կատարվի ուրիշի գույքին տիրանալու նպատակով: Ավագակությունը կարող է կատարվել ինչպես շահադիտական, այնպես էլ այլ շարժառիթներով: Մեր ուսումնասիրությունները մասնավորապես ցույց են տվել, որ ավագակության համար դատապարտվածներից ոմանք (ճիշտ է՝ բացարձակ մեծամասնությունը) հանցանքը կատարել են դրան կամ այլ գույք ձեռք բերելու ձգտմամբ, մյուսները՝ իրենց «խիզախությունն» ապացուցելու մղումով, երրորդները՝ հանցակիցների հնարավոր վրեժխնդրությունից վախի ազդեցության տակ առաջացած դրդմամբ, չորրորդները՝ «հանուն ընկերության» գաղափարի վերաբերյալ սեփական պատկերացումներից ելնելով և այլն:

- ¹ St'u Бойцов А.И. Преступления против собственности. СПб., 2002, т 459:
- ² St'u, орһишл, Матышевский П.С. Уголовно-правовая охрана социалистической собственности в Украинской ССР. Киев, 1972, т-гьт 102-103. Кригер Г.А. Квалификация хищений социалистического имущества. М., 1974, тгьт 126-127. Владимиров В.А. Квалификация хищений личного имущества. М., 1974, тгьт 60-61. Тишкевич И.С. Уголовная ответственность за посягательства на социалистическую собственность. Минск, 1984, тгьт 66-67:
- ³ St'u Успенский А. О недостатках определенных некоторых форм хищения в новом УК // Законность, 1997, N 2, т 36:
- ⁴ St'u ғыл Җыжышһыһи Җһиһрһыһтһиһрһиһ рһтһыһлһиһ һрһыһлһиһр: Җһыһһлһл һыһ, т 378:
- ⁵ St'u ғыл Уголовное право: Особенная часть / Под ред. А.И. Рапога. М., 1997, т 115. Борзенков Г. Хищение и теперь хищение // Человек и закон, 1998, N 8, т 53:
- ⁶ St'u Вьюнов В.М. Разбой: уголовно-правовая характеристика. Автореф. диссерт. на соиск. учен. степ. канд. юрид. наук. Томск, 2003, т 15:
- ⁷ St'u ғыл Җыжышһыһи Җһиһрһыһтһиһрһиһ рһтһыһлһиһ һрһыһлһиһр: Җһыһһлһл һыһ, т 352:
- ⁸ St'u ғыл Плохова В.И. Ненасильственные преступления против собственности: криминологическая и правовая обоснованность. М., 2003, т 18:
- ⁹ St'u Кочои С.М. Ответственность за корыстные преступления против собственности. Учебно-практическое пособие. М., 2000, т 80:
- ¹⁰ St'u ғыл Иванцова Н. Разбой - насильственное хищение чужого имущества // Уголовное право, 2003, N 2, т 35:
- ¹¹ St'u Корчагин А.П. Уголовное законодательство о преступлениях в сфере экономики и управления: сравнительное изучение // Государство и право, 2002, N 12, т 41:
- ¹² St'u Марцев А.И., Векленко В.В. Совершенствование уголовного законодательства об ответственности за разбой // Российский юридический журнал, 1994 N 2, тгьт 34-35:
- ¹³ St'u Белокуров О.В. Международное и национальное уголовное законодательство: проблемы юридической техники // Материалы III Междунар. науч.-практ. конф., состоявшейся на юрид. фак. МГУ им. М.В. Ломоносова 29 - 30 мая 2003 г. / Отв. ред. В.С. Комиссаров. М., 2004, т 83:
- ¹⁴ St'u Успенский А. О недостатках определенных некоторых форм хищения в новом УК // Законность, 1997, N 2, т 36. Козлов А.П. Учение о стадиях преступления. СПб., 2002, тгьт 151-152:
- ¹⁵ St'u Коробов П. Разбой как типичная форма хищения // Уголовное право, 2006, N 1, т 36:
- ¹⁶ St'u Иванцова Н. Разбой - насильственное хищение чужого имущества // Уголовное право, 2003, N 2, т 35:
- ¹⁷ St'u Агапов П. Уголовно-правовая характеристика нападения при бандитизме // Уголовное право, 2005, N 6, т 4:
- ¹⁸ St'u Нагаева Т.И. Уголовно-правовая оценка нападения: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2005, т 9:
- ¹⁹ St'u Владимиров В.А. Преступления против социалистической собственности. М., 1984, т 95:
- ²⁰ St'u Гагарин Н.С. Квалификация некоторых преступлений против социалистической и личной собственности. М., 1973, тгьт 15-16:
- ²¹ St'u Кригер Г.Л. Квалификация хищений социалистического имущества. М., 1974, т 14:
- ²² St'u Каракетов Ю.М. Ответственность за разбой по уголовному законодательству Узбекской ССР. Каракалпакстан, 1990, т 26:
- ²³ Гаухман Л.Д. Насилие как средство совершения преступления. М., 1974, т 108:
- ²⁴ Владимиров В.А., Ляпунов Ю.И. Социалистическая собственность под охраной закона. М., 1979, т 111:
- ²⁵ St'u Гравина А.А., Яни П.С. Правовая характеристика нападения как элемента объективной стороны разбоя // Советская юстиция, 1981, N 7, т 19:
- ²⁶ St'u Симонов В.И., Шумихин В.Г. Преступное насилие: понятие, характеристика и квалификация насильственных посяга-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵ

тельств на собственность. Пермь, 1992, էջ 89:

²⁷ Տե՛ս նաև Владимиров В.А. Квалификация похищенного личного имущества. М., 1974, էջեր 66-67:

²⁸ Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, էջ 379:

²⁹ Տե՛ս Барченков Д.В. Понятие разбоя и некоторые вопросы его квалификации по УК РФ // Вопросы ответственности и наказания в современном российском законода-

тельстве: Сб. науч. тр. Рязань, 2001, էջեր 18-26.

³⁰ Տե՛ս նաև Прохоров Л.А., Прохорова М.Л. Уголовное право: учебник для вузов. М.: Юристъ, 2006, էջ 208:

³¹ Տե՛ս Вьюнов В.М. Разбой: уголовно-правовая характеристика. Автореф. диссерт. на соиск. учен. степ. канд. юрид. наук. Томск, 2003, էջ 19:

³² Տե՛ս Наумов А.В. Российское уголовное право: курс лекций. М., 2007, էջ 216:

ABOUT SOME PROBLEMS CONNECTED WITH OBJECTIVE AND SUBJECTIVE ATTRIBUTES OF THE ROBBERY

Tigran NERSISYAN

Post-graduate student of the Yerevan State University department of Criminal Law, docent of the RA Police Academy department of investigation and criminalistics, lieutenant colonel of the Police

The attributes, which characterize the objective and subjective parts of the robbery according to the Criminal code of the Republic of Armenia are discussed in this article.

In this context author has analyzed the corresponding norms of the Criminal Code

of the RA and uncovered the certain practical problems. So, he suggests to qualify as a robbery the facts of raiding at illegal ascendants of property as well.

Besides, author indicates that occasionally the trial of robbery is possible too. For example, when riding is committed not at man, but at manikin.

Disputing the subjective attributes of robbery author indicates, that the obligatory attribute of robbery is the purpose of crime. So, as mentioned in the article, it is not obligatory, that the motives of robbery are only venal.
